Գասըմ հաստատեցաւ 'ի պաշտօնի իւրում. գրեաց և առ Միւֆթին և ասէ՝ դու գոլով 'ի դասէ գիտնականաց, զի՞ փոյթ է քեզ ձեռն մխել 'ի գործ քաղաքականութեան և կառավարութեան, նիստ 'ի տուն քո և արա աղօթս վասն կենաց Թագաւորին։ Եւ 'ի գիշերին յայնմիկ եղեւ ուրախութիւն մեծ 'ի քաղաքին՝ արձակելով հրանօթս 'ի բերդէն. և Միւֆթին անկաւ խօթ 'ի Սիոն եւ արձակեաց յինքենէ զրաղմութիւն Ֆէլլահից։ Եւ 'ի վաղիւ անդր դնացին առ նա դատաւորն եւ քաղաքապետն՝ այլովքն հանդերձ. և նորա զիջեալ 'ի կամս նոցա՝ արար հաշտութիւն, այլ ոչ էջ 'ի տուն իւր. բացան դրունք քաղաքին և վանօրէից։

Ի խառնաշփոթ ժամանակիս յայսմիկ անտանելի էր ըստահակութիւն այլազգեացն Սիոնի, զի կալեալ զդաղաղ ննջեցելոց 'ի ճանապարհի դնէին անդ 'ի հրապարակս, և ոչ տային թոյլ թաղել զնա մինչչեւ առեալ իցեն զգումարս դրամոց. նեղեալ Հայոց յանհանդուրժելի չարութեանց նոցին, բողոք կալան առ դատաւորն՝ եւ ետուն նմա գրել 'ի Դուռն, զի հրովարտակաւ Արքայի բարձցին անկարգութիւնք նոցին։

Աղա Յովհաննան 'ի Սուրաթ քաղաքի յաշխարհին Հնդկաց, 'ի կենդանութեան իւրում՝ զկնի այլոց՝ կըտակաւ աւանդէ 'ի կտակատուն ընկերութեան Անգլիոյ գումարս ինչ վասն Աթոռոյն Երուսաղէմի։ Զկնի մահուան իւրոյ, կտակակատար նորին աղա Մովսէս Խաչիկ Առաքել՝ անկեալ 'ի ներքոյ պարտուց. զձեռագիր մուրհակս կտակացն հանէ 'ի վաճառ. զայս լուեալ Թէոդորոս Պատրիարքին գրէ առ Յակոբ վարդապետ Նուիրակն Հնդկաց վերահասու լինել և հաստատութեամբ կարգաւորել զայն գործ խորհրդով Հայ Իշխանաց այնր աշխարհի։ Սակայն չեղեւ ինչ օգուտ՝ զի 'ի վաղ վատնեալ էր նորա զամենայն դոյս հանդուցելոյն և իւրն իսկ (1807)։

Ի բազմանալ տոկոսաւոր պարտուց 'ի վերայ Աթոռոյն՝ և 'ի յաճախել բողոքոյ և դանկատանաց միաբանաց յականջս երեւելեաց ազգին, գրեցին առ Թէոդորոս Պատրիարք առաքել զտումարս բովանդակ ելից և մտից Աթոռոյն, սկսեալ յառաջին ամէ Պատրիարքութեան իւրոյ։